Կյանքի կոչենք մեր արժեքները

Վարվեցողության կանոններ՝

Միջազգային Կարիտասի անդամ կազմակերպությունների աշխատակազմի համար

Սույն Վարվեցողության կանոնակարգը առանձնացնում է վարվեցողության և վարքագծի կանոնները, որոնց պետք է հետևեն Կարիտասի բոլոր աշխատակիցները[1]: Այն բխում է Կարիտասի Էթիկայի կանոնակարգից և սերտորեն կապված է դրա հետ, որը նախանշում է Կարիտասի հիմնական արժեքներն ու կազմակերպական գործելակերպերը:

Անձինք, որոնք հոգ են տանում կարիքավորների մասին, պետք է, առաջին հերթին, լինեն մասնագիտորեն պատրաստված, հիմնարար ուսուցում անցնեն առ այն, թե ինչ և ինչպես անել, և պետք է նվիրված լինեն շարունակական խնամատարության գործին: Այնուամենայնիվ, թեև մասնագիտական համապատասխանությունը հիմնարար պահանջ է, միայն ինքնին բավարար չէ: Մենք գործ ունենք մարդկային էակների հետ, իսկ մարդկային էակները կարիքն ունեն ավելին, քան զուտ տեխնիկական խնամքի: Նրանք մարդկային վերաբերմունքի կարիք ունեն, նրանք սրտացավության[2] կարիք ունեն: Սույն Կանոնակարգը բաժանված է չորս հիմնական ենթաբաժինների՝ կիրառելիությունը դյուրացնելու համար:

Կարիտասի բոլոր աշխատակիցները պարտավոր են.

1. Արժեքներ, վարվեցողություն և էթիկա

- հետևել, կամ, առնավազն հասկանալ և հարգել Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական և բարոյական արժեքներն ու ուսմունքը,
- մշտապես ապահովել, որ սեփական անձնական եւ մասնագիտական վարքագիծը համապատասխանի բարձրագույն չափորոշիչներին, և իրոք այդպես լինի,

[1] Վարվեցողության այս կանոնակարգում «անձնակազմ» բառը վերաբերում է Խորհդրի անդամներին, աշխատակիցներին, կամավորներին, խորհրդատուներին:
[2] *Deus Caritas Est,* #31.

- գործել հավատքով և մարդկանց հետ վարվել արժանապատվությամբ ու հարգանքով՝ դրանով իսկ ստեղծելով մի միջավայր, որտեղ կարևոր է բազմազանությունը,
- հարգել մարդկային բոլոր հիմնարար իրավունքներն ու պայքարել խտրականության, բռնության, չարաշահման, արհամարհանքի և շահագործման դեմ, որոնք ոտնահարում են այլոց իրավունքները,
- խուսափել «սեփական հավատքը այլոց պարտադրելուց՝…գիտակցելով, որ մաքուր եւ առատաձեռն սերը Աստծո լավագույն վկան է, Աստծո, Ում մենք հավատում ենք և Ով մեզ մղում է դեպի սերը[3] ,
- չանել ռասսիստական, սեռական ու այլ վիրավորական հրապարակային կամ անձնական հայտարարություններ,
- ձեռնարկել ողջամիտ քայլեր՝ մարդկանց պաշտպանելու չարիքից,
- հետևել տվյալ երկրի օրենսդրությանը, խղճի համաձայն,
- հարգել ու զգայուն լինել տեղական սովորույթների և մշակույթի նկատմամբ, հագնվել պատշաճ,
- ապահովել, որ իրենք՝ աշխատակիցները, և իրենց ենթակա անձնակազմը գործեն համաձայն Հայկական Կարիտասի Ներքի կանոնակարգում նշված առողջապահության, անվտանգության դրույթների՝ ջանալով հոգ տանել նաև այլոց մասին,
- ապահովել, որ Կարիտասը չհեղինակազրկվի,
- պահպանել Կարիտասում պարտականությունների իրականացման ընթացքում ձեռք բերած ցանկացած տեղեկատվության եւ գիտելիքի գաղտնիությունը,
- պարտականություններն իրականացնել հավուր պատշաճի և սիրով՝ առանց կանխակալության կամ խտրականության որևէ դրսեվորումների՝ պահպանելով Հայկական Կարիտասի նախընտրությունը հանուն կարիքավորների,
- տեղական միջավայրերում սեփական հավատքի մասին արտահայտվելիս կամ պաշտամունք կատարելիս՝ չմոռանալ նրբանկատությունը,
- լինել բաց, համերաշխ և համագործակցել Կարիտասի այլ կազմակերպությունների աշխատակիցների հետ:

[3] *Deus Caritas Est* #31c

2. Շահերի բախումներ, հարկադրում և կոռուպցիա

- Չչարաշահել Հայկական Կարիտասի աշխատակից լինելուց բխող սեփական դիրքն ու իշխանությունը՝ ճնշում գործադրելու կամ անձնական շահույթ ստանալու նպատակներով՝ տնտեսական, մասնագիտական, քաղաքական կամ սեռական ճանապարհներով,
- Կարիտասի աշխատանքին վերաբերող ցանկացած հնարավոր կամ իրական շահերի բախման (ֆինանսական, անձնական կամ ընտանեկան) վերաբերյալ գրավոր կերպով ներկայացնել անմիջական ղեկավարին կամ այլ ղեկավար անձի,
- չընդունել նվերներ, կաշառքներ կամ անձնական հարստացման [4] այլ դրսևորումներ՝ շահառուներից, գործընկերներից կամ պայմանագրի կողմերից:

3. Պաշտպանել Կարիտասի սեփականությունը և կատարել տնտեսվարություն

- Ապահովել, որ Կարիտասի միջոցները և ինտելեկտուալ սեփականությունը օգտագործվեն ըստ նպատակի, պաշտպանված լինեն գողությունից, խարդախությունից կամ այլ վնասներից
- պահպանել ազնվության և շիտակության պատշաճ չափորոշիչները՝ ֆինանսական հաշվետվողականության մեջ:

4. Անձնական վարվեցողություն

- Չկրել զենք՝ Կարիտասի որևէ գործունեության ժամանակ կամ որևէ սեփականության մեջ (սեփական կամ վարձակալած)՝ ներառյալ հարկաբաժիններում/գրասենյակում/շարժական միջոցներում և այլն,
- չօգտագործել ալկոհոլային խմիչքների անթույլատրելի քանակություն,
- մշտապես ունենալ պատշաճ սեռական վարքագիծ,

[4] Կարելի է ընդունել փոքրիկ խորհրդանշական նվերներ Կարիտասի անունից՝ հարգելու ազգային և տեղական ավանդությունները և հյուրասիրությունը, բայց հարկ է այդ մասին հայտնել:

Վարվեցողության կանոնների պահպանությունը

Տնօրենը կամ գլխավոր գործադիր մարմինը պարտավոր է ապահովել, որ ամբողջ անձնակազմը ծանոթանա Վարվեցողության կանոնակարգին և հանձնառությամբ կիրառի այն, որ փաստաթուղթը կանոնավոր կերպով քննարկվի եւ լրամշակվի:

Միջազգային Կարիտասի Վարվեցողության կանոնակարգի որդեգրումը կամ հարմարեցումը կգնահատվի համաձայն Միջազգային Կարիտասի Ներքին կանոնակարգի 1.3 կետի և կներառնվի Միջազգային Կարիտասի նվազագույն չափորոշիչների մեջ:

Բողոքարկման ընթացակարգ

Արտահերթ բողոքարկման ընթացակարգը պետք է մշակվի՝ համաձայն ՄԿ-ի մինիմում չափորոշիչների 1.7 կետի: Մասնավորապես, կարևոր է, որ շահառուները, համայնքի անդամներն ու գործընկերները կարողանան ներկայացնել իրենց բողոքները:

Տեղեկացման պարտավորությունը

Անձնակազմի յուրաքանչյուր անդամ պարտավոր է անհապաղ տեղեկացնել սույն Կանոնակարգի խախտման բոլոր կասկածելի դեպքերի մասին: Շատ դեպքերում անձնակազմի անդամներն իրենց մտահոգությունները պետք է հայտնեն իրենց անմիջական ղեկավարներին: Դա կարող է արվել բանավոր կամ գրավոր՝ ընդգրկելով բոլոր մանրամասները և, եթե հնարավոր է, վկայությունները: Եթե, ինչ որ պատճառով (օր. անմիջական ղեկավարի առնչությունը տվյալ փաստի հետ) դա հնարավոր չէ, նրանք պարտավոր են խոսել ավելի վերադաս ղեկավարի, Վարչական խորհրդի անդամների կամ այլ իրավասու ղեկավարի հետ:

Բոլոր բացահայտումները գաղտնի կպահվեն: Յուրաքանչյուր ոք, ով բարձրաձայնում է իր մտահոգությունները՝ բացասական ծանր երևույթների մասին, պաշտպանված կլինի հետապնդումներից կամ այլ վնասաբեր դրսևորումներից՝ այն պայմանով, որ մտահոգությունը բարձրաձայնվել է բարի նպատակով: Կանխամտածված սուտ մեղադրանքները լուրջ կարգապահական խախտում են, որոնք կուսումնասիրվեն և, համապատասխան պատժամիջոցներ կկիրառվեն:

Վարվեցողության կանոնների խախտումը

Վարվեցողության կանոնների յուրաքանչյուր խախտում պետք է առնվի քննության և կարող է հանգեցնել կարգապահական պատժամիջոցների կիրառմանը:

Ամսաթիվ՝

Արհ. Տ. Ռաֆայել արքեպս. Մինասյան՝
Հայկական Կարիտասի նախագահ

Հաստատված է Միջազգային Կարիտասի Ներկայացուցիչների խորհրդի կողմից, 2014 թ. մայիսի 18-ին